ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 06 >> դեկտեմբեր 2019թ. N ՄՊ/07-2019

ք. Արմավիր

<<ԾԻԱԾԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի հունվարի 21-ի N ՄՈ/ 23-2019 և 2019 թվականի հունվարի 23-ի N ՄՈ/ 24-2019 որոշումները, <<Ծիածանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Ծիածանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լարիսա Մկրտչյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետի պաշտոնակատար Ա. Վասիլյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

06.02.2019

X

VERIFIED OCSP 06.02.2019 17:34:09 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2019 թվականի 06 հանվարի-ի

N 2/07-2019 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Սարգսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Անդամներ՝

Ա.Առաքելյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

Ս. Սաֆարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանստնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ

Հանձնող՝

Ն .Կարապետյան- <<Ծիածանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

Ընդունող՝

Գ .Գազազյան- << Ծիածանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ***Վ.ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 30.01.2019 13:01:13 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217